



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Երջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան
« 06 » 12 2024 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 266 - 24

Նախաձեռնող՝

«Վեոյիա ջուր» ՓԲԸ
Ք. Երևան, Արուսյան 66ա

Գործունեությունը՝

«Արզական-Երևան ջրափարի» նշակետի 165+50 «Նոր Հաճըն»
փիէկի կառուցում
Կոտայքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 266 - 24

«06» գեկտեմբերի 2024թ.

«Արզական-Երևան ջրատարի» նշակետ 165+50 «Նոր Հաճըն» փհէկի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Վեոլիա ջուր» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ»
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Նոր Հաճըն համայնք, Նոր Հաճըն բնակավայր

Ներածական մաս. Ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությամբ /այսուհետ՝ հաշվետվություն/ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից նախատեսվում է Կոտայքի մարզի Նոր Հաճըն քաղաքի Պարգևաշեն 1-ին թաղամասի 2-րդ փողոցի 25/1 հասցեում՝ «Արզական-Գյումուշ» ջրատարի վրա կառուցել «Նոր Հաճըն» փոքր հիդրոէլեկտրակայան /այսուհետ՝ փհէկ/:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /ՀՕ-150-Ն, այսուհետ՝ օրենք/ 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի բ ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է Բ կատեգորիայի:

Նկարագրական մաս. Գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել Նոր Հաճընի համայնքապետարանի կողմից 2023թ. հոկտեմբերի 20-ին տրամադրված N 317 ճարտարապետահատակագծային առաջադրանքը, շրջակա միջավայրի նախարարության կողմից 2024թ. հուլիսի 18-ի տրված N269 Ջրօգտագործման թույլտվությունը:

Նախատեսվող գործունեության տարածքը զբաղեցնում է 0.085879 հա (0.075665 հա + 0.010214 հա), որի 0.075665 հա տարածքը պատկանում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին, իսկ մնացած 0.010214 հա հանդիսանում է բաժնային սեփականություն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և հարակից՝ Պարգևաշեն 1-ին թաղամաս, 2-րդ փողոց 25 հասցեի հետ: Բաժնային սեփականություն հանդիսացող տարածքը բարեկարգված ճանապարհ է, որը տանում է դեպի փհէկի առանձնացված և ցանկապատված տարածք:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից ջրամատակարարման արտաքին ընդհանուր համակարգի բարելավման ուղղությամբ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը նախագիծ: Գործունեությամբ նախատեսվում է «Արզական-Երևան» ջրատարի վրա կառուցել «Նոր Հաճըն» փոքր հիդրոէլեկտրակայան:



Չովունի ճյուղավորվող խողովակաշարում պահպանել 1300 լ/վ հաստատուն ջրաքանակ, իսկ ավելացող ջրաքանակներն ուղղվելու են «Արզական-Երևան» ջրատարից դեպի Գետամեջ ճյուղավորվող խողովակաշար:

«Նոր Հաճըն» փհէկի տեղամասը գտնվում է Կոտայքի մարզի Նոր Հաճըն-Գետամեջ խաչմերուկից 300 մ հյուսիս՝ Աբովյան-Եղվարդ ճանապարհի ձախ կողմում: Նախագծվող փհէկի շենքի տարածքը գտնվում է Աբովյան-Լուսակերտ մայրուղու ձախակողմյան փողբիկ դարավանդի վրա, որի հարևանությամբ Արզնի-Շամիրամ ջրանցքն ու Արզնի-Երևան խմելու ջրագիծը խաչվում են իրար հետ:

Նախատեսվող գործունեության տարածքում չկան էնդեմիկ կամ Կարմիր գրքերում գրանցված որևէ բուսատեսակ և կենդանատեսակ, բացակայում են նաև միգրացիոն ուղիները՝ տարածքի ուրբանացված լինելու պատճառով:

Ուսումնասիրվող տարածքը տեղակայված է Կոտայքի հրաբխային սարավանդի հարավային մասում, Հրազդան գետի կիրճի՝ աջ բարձրադիր ափի հարթության վրա:

Գործունեության տարածքը գտնվում է չափավոր տաք կլիմայական գոտում:

«Արզական-Գյումուշ» ջրատարի երկարությունը մինչև նախատեսվող փհէկը կազմում է 8900 մ, տրամագիծը՝ 1200 մմ: Հիդրոէներգետիկ հաշվարկները կատարվել են ըստ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրված ավելցուկային ճնշման տվյալների: Այն հիմնավորված է ճնշումային խողովակաշարի երկարության տարբեր տեղամասերի համապատասխան չափումների հիման վրա:

Հիդրավիկական հաշվարկների արդյունքում պարզվել է, որ «Արզական-Գյումուշ» ջրատարի հաշվարկային ճնշումը՝ նախատեսվող փհէկի շենքում տեղադրվող հիդրոագրեգատի վրա տատանվում է 20.64-20.0 մ:

Համաձայն փհէկի հիդրոէներգետիկ ցուցանիշների հաշվարկի՝ ընտրված է 1.300մ³/վրկ հաշվարկային ելքը՝ հիմք ընդունելով «Արզական-Երևան» ջրատարով անցնող ելքերը: Փհէկի հաշվարկային ելքի դեպքում էլեկտրաէներգիայի տարեկան արտադրանքը միջին տարվա համար կազմում է 1.925 մլն. կՎտժ, հաշվարկային հզորությունը՝ 220 կՎտ:

Փհէկն իր մեջ ներառում է հետևյալ կառուցվածքները.

- փականային հանգույց,
- 0.72մ տրամագծով, 238 գծ.մ երկարությամբ շրջանցող ճնշումային մետաղական խողովակաշար, որը կմիանա «Արզական-Գետամեջ» ջրատարին,
- կայանային հանգույց (ՓՀԷԿ-ի շենք),
- հեռացնող համակարգ, որով հիդրոագրեգատի օգտագործած ջուրը տեղափոխվելու է «Արզական-Երևան» ջրատար:

Փականային հանգույցն իրենից ներկայացնում է փականահոր՝ 2.3x2.3 մ չափերով և 2.5 մ բարձրությամբ, որն իրականացվելու է B15 դասի միաձույլ ե/բ-ից: Փականահորում նախատեսվում է տեղադրել 700 մմ տրամագծի սողնակ: Մոտեցող խողովակի երկարությունը կազմում է 18.0 գծ.մ, իսկ տրամագիծը՝ 1200 մմ:

Ճնշումային խողովակաշարի երկարությունը 238 գծ.մ է, տրամագիծը՝ 720 մմ: Խողովակի համար փորվող խրամուղին կունենա սեղանաձև կտրվածք, հատակի 1.5 մ լայնություն, 4:1 շեփերի թեքություն, 1.5 մ խորություն: Խողովակաշարը նախատեսվում է տեղադրել և մոնտաժել 0.15 մ հաստությամբ ավազային շերտի վրա: Այն ունի բիտումապոլիմերային մածուկով երկշերտ հակակոռոզիոն մեկուսացում:

«Արզական-Գետամեջ» ջրատարի շրջանցող 238 գծ.մ երկարությամբ նոր խողովակաշարը կապահովի անհրաժեշտ ճնշում՝ սպառողների անխափան ջուրը մատակարարելու համար:

Կայանային հանգույցի տարածքի հատակագծային չափերն են 27.0x16.0 մ, որի



ամբողջ պարագծով տեղադրվելու է մետաղական ցանկապատ:

Փհէկի շենքը հատակագծում ունի Դ-աձև տեսք, որը բաղկացած է 2 մասնաշենքից՝ հիմնական շենքից և կից կառուցված օժանդակ շինությունից: Շենքի պարագծով իրականացվելու է 1 մ լայնությամբ սալիկապատ մայթ:

Հիմնական շենքն ուղղանկյունաձև հատակագծով միահարկ կառույց է, 8.5x6.5 մ առանցքային չափերով և միաթռիչք՝ լայնական ուղղությամբ: Հիմնական շենքի բարձրությունը կազմում է 7.68 մ: Այստեղ նախատեսվում է տեղադրել 9 տոննա բեռնամբարձողականությամբ ամբարձիչ և Ֆրենսիս տեսակի 1 հատ տուրբին:

Օժանդակ շինությունը 4.2x5.64 մ առանցքային չափերով ուղղանկյունաձև հատակագծով միահարկ կառույց է, միաթռիչք՝ լայնական ուղղությամբ: Բարձրությունը կազմում է 4.54 մ:

Խարսխային հենարանը նախատեսվում է կառուցել ճնշումային խողովակաշարի վերջնամասում: Խարսխային հենարանը հատակագծում ունենալու է 2.8x2.4մ, H=4.05մ չափեր՝ իրականացված B15 դասի բետոնից, և տեղադրվելու է նախապես պատրաստված 100 մմ հաստությամբ B10 դասի բետոնյա նախաշերտի վրա:

Մարիչ հորը հատակագծում ունի 4.6x3.4 մ, H=5.0 մ չափեր, որի հատակն ու պատերը իրականացվելու են B20 F150 W6 դասի միաձուլ ե/բետոնից և տեղադրվելու են նախապես պատրաստված 200 մմ հաստությամբ B10 դասի բետոնյա նախաշերտի վրա:

Հեռացնող ջրանցքը կազմված է 2 բլոկից՝ հեռացնող ջրանցք և վթարային ջրհեռ: Հատակագծում ունի 5.23x4.2 մ չափեր, իրականացվելու է B20 W6 դասի բետոնից և տեղադրվելու է նախապես պատրաստված 200 մմ հաստությամբ բետոնյա նախաշերտի վրա: Հեռացնող ջրընդունիչից հետո փհէկից հեռացվող ջուրը նորից միանում է «Արզական-Երևան» ջրատարին: Նույն ջրանցքում ջրի հորիզոնի 1357.90 մ նիշը ապահովում է ճնշում՝ «Արզական-Երևան» ջրատարի անխափան աշխատանքի համար:

«Նոր Հաճըն» փհէկի համար նախատեսվում է 1x220 կՎտ հզորության, 380 Վ լարման ասինքրոն գեներատորով հիդրոագրեգատ՝ 10 կՎ լարման և 50 Հց հաճախականություն սինքրոն գեներատորով:

Փհէկի հիմնական հիդրոուժային սարքավորումը (տուրբին-գեներատոր)՝ նախատեսվում է չեխական «HIDROHRUM» մակնիշի, որը նախատեսվում է տեղադրել Արզական-Երևան խմելու ջրատարի վրա: Խմելու ջրի հետ անմիջական շփում են ունենալու միայն հիդրոագրեգատի աշխատանքային անիվը (տուրբին) և խխունջաձև մարմինը, որտեղ բացակայում են քսայուղային նյութերի օգտագործումը: Դրանք իրականացված են չժանգոտվող պողպատից, սարքավորման տեխնիկական բնութագրին համաձայն կիրառելի են նաև խմելու ջրի համար և համապատասխանում է միջազգային ISO և IEC ստանդարտներին:

Չնայած արտահոսքի նկատմամբ անվտանգության բարձր մակարդակին՝ (տրանսֆորմատորային յուղի ջերմաստիճանը վերահսկվում է թերմոստատի միջոցով, իսկ մակարդակը՝ օպտիկական ցուցիչով), տրանսֆորմատորային սարքավորումն ապահովված է նաև յուղահավաք համակարգով: Տրանսֆորմատորը նախատեսվում է տեղադրել խճով լցված բետոնե ավազանում, ինչն իր հերթին թույլ կտա լրկալացնել և կանխել ցանկացած արտահոսք: Տրանսֆորմատորային ենթակայանը տեղակայված է լինելու փհէկի շենքի օժանդակող մասնաշենքում:

Վթարային իրավիճակների դեպքում հիդրոտուրբինն իր մեջ ներառելու է անվտանգության (By Pac) համակարգը:

Ընդհանուր արդյունավետությունը (ՕԳԳ) հաշված է՝ ելնելով հետևյալ տվյալներից.

- գեներատորի ՕԳԳ - 94.9%,



- տուրբինի ՕԳԳ - 88.1%,
- ագրեգատի ընդհանուր ՕԳԳ՝ $g \times O_{OG} \times q \times O_{OG} \times t = 9.81 \times 94.9 \times 88.1 = 82\%$,
- նախատեսված է մեկ ագրեգատ՝ 220 կՎտ դրվածքային հզորությամբ:

փիէկի շենքում տեղադրվող տեխնոլոգիական սարքավորումներն են.

1. Հիդրոուժային սարքավորումը՝ տուրբին-գեներատոր՝

- քանակը - 1 հատ
- տուրբին - Ֆրենսիս
- հաշվարկային ճնշումը - 20.64 մ
- հաշվարկային ելքը - 1.300 մ³/վ
- դրվածքային հզորությունը - 220 կՎտ
- աշխատանքային անիվի տեղակայման նիշը - 1373.0 մ
- պտտման արագությունը - 500 պտ/րոպե
- արտադրող գործարանը - «HIDROHROM» (Չեխիա)
- տեսակը - սինքրոն
- ակտիվ հզորությունը - 220 կՎտ:

Գեներատորային 10 կՎ լարումը 10 կՎ ցանցին միացնելու համար փիէկի շենքում՝ փակ բաշխիչ սարքի սրահում, նախատեսվում է տեղադրել KM-1Փ մակնիշի բջիջը, որից էլ վակումային անջատիչի միջոցով կայանը միանալու է գործող 10 կՎ օդային գծին: Փակ բաշխիչ սարքի սրահում, տեղադրվելու է 10/0.4 կՎ, 100 կՎԱ սեփական կարիքների տրանսֆորմատորը: Նշված հզորությունը գործող 10 կՎ-ի օդային գծով միանալու է 35/10 կՎ ենթակայանի 10 կՎ բջիջին, որում տեղադրված են երկկողմ հաշվառք իրականացնող էլեկտրոնային հաշվառքի սարքեր: Նախագծային լուծումների համար հիմք է հանդիսացել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրված S-10/0145-Հ տեխնիկական պայմանը:

Տեխնիկական պայմանի համաձայն՝ փիէկի էլեկտրամատակարարումն իրականացվելու է գոյություն ունեցող «Հաճն» 35/10/6 կՎ ենթակայանի բջիջ 18 «Պոմպակայան-5» 10 կՎ օդային գծի մոտակա խարսխային հենասյունից՝ ճյուղավորումով կառուցելով 10 կՎ լարման էլեկտրահաղորդման գիծ, որի համար պահանջվում է 38 մ օդային գիծ:

10 կՎ օդային գծի կառուցման համար նախատեսված են միականգնակ միջանկյալ Պ10-2 տիպի 2 հատ ե/բ հենասյուններ: Նախագծով նախատեսված է նաև հենասյուների հողանցման իրականացում:

Բոլոր աշխատանքները կիրականացվեն էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան, համաձայն որի նախագծվող 10 կՎ օդային գծերում առավելագույն կախվածքի դեպքում օդային գիծը նախատեսվում է անցկացնել գետնից 7 մ բարձրությամբ:

400/10 կՎԱ հզորության տրանսֆորմատորային ենթակայանը նախատեսվում է տեղակայել փիէկի շենքի օժանդակ տարածքում, որի սնումը նախատեսվում է իրականացնել ստորգետնյա մալուխագծով (ԱՄԲՊ-3x70 մմ²), որի միացումն օդային գծին և ենթակայանին, կիրականացվի ջերմանստեցնող միացնող կցորդիչով:

Փիէկում տեղադրված տուրբինի հաշվարկային հզորությունը կազմում է 220 կՎտ: Փիէկով արտադրված 1.925 հազ. կՎտ էլեկտրաէներգիան օգտագործվելու է միայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ սեփական կարիքների համար՝ տեղափոխելով ընկերությանը պատկանող այլ տեղամասեր, վճարելով բաշխման ցանցին միացման ծախսերի մատուցման սակագինը:



Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից այն իրականացվելու է ավանդական եղանակով՝ կիրառելով «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի տարածք նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհով, իսկ շինարարության տարածքը սահմանազատել՝ ելնելով անվտանգության տեխնիկայի կանոններից:

Հաշվետվությունում նախատեսվել են թափոնների ազդեցության մեղմմանն ուղղված միջոցառումներ, որոնց ճիշտ կառավարման արդյունքում վերջիններիս ազդեցությունները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույն:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար տարածքն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Չտեսակավորված կենցաղային աղբը, որի ընդհանուր առավելագույն քանակը շինարարության համար կանխատեսվում է մոտ 3.5 տ, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողը կազմելու է մոտ 1300 մ³: Այն կհեռացվի ու կտեղադրվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Շինարարական աղբը՝ շուրջ 80 մ³ ծավալով, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (30 մարդ), ինչը կազմում է 386.5 մ³:

Հաշվի առնելով շինարարության ընթացքում միաժամանակյա շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկային մակերեսը՝ ջրցանի հաշվարկը կատարվել է շինարարության առավելագույն տարածքի չափի համար՝ 858.79 մ², ջրցանի պահանջարկը կազմում է 680.2 մ³: Շինարարության ընթացքում պահանջվող առավելագույն ջրապահանջը կկազմի 1066.7 մ³:

Համաձայն հաշվետվության՝ շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կներառեն՝ օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսներ վտանգավոր նյութերի, այդ թվում տրանսպորտային միջոցներից և սարքավորումներից յուղերի հնարավոր ներթափանցման կանխարգելմանը, տարածքի կենսաբազմազանության պահպանմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են ՇՄԱԳ-ի բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, մասնավորապես.

- օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարել գրունտի խոնավացում և



- ճանապարհների ջրցան՝ ջրցան մեքենայով, չոր և շոգ եղանակներին,
- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավացումը կատարվելու են այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,
- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով,
- տարածքում նութերը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,
- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ,
- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան ժամանակավոր կայանվելու է գրունտային ճանապարհի վրա՝ հողային ռեսուրսները չաղտոտելու նպատակով,
- ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործվելու է տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով կամ օգտագործվելու է պարզարանի ջուրը,
- շինարարական տեխնիկայի և սարքավորումների լիցքավորումը, վերանորոգումը կատարվելու է գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում,
- շինարարական աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին,
- շինարարության ընթացքում պահպանվելու են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և այլն:

Փհէկի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, ճանապարհի կարգաբերում:

Նախատեսված գործունեության շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված միջոցառումների համար նախատեսվել է մոտ 2.5 մլն. ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման շրջանակներում իրականացվել են փհէկի կառուցման և շահագործման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություններ, որոնց հիման վրա գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան փհէկի շինարարության և շահագործման ընթացքում: Մշակվել են այդ ազդեցությունները կանխարգելող կամ մեղմող միջոցառումներ, ինչպես նաև այդ միջոցառումների արդյունավետության վերահսկման և մոնիթորինգի ծրագիր:

Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը զգալի չէ և կրում է ժամանակավոր բնույթ:

Այսպիսով, իրականացվող աշխատանքների ընթացքում հնարավոր բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Փհէկի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննության գործընթացն իրականացվել է օրենքի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, պաշտպանության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, քաղաքաշինության կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, և որ Հաճընի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:



Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում և հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները,

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Նոր Հաճընի համայնքապետարանում իրականացվել է հանրային լուսմներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման ընթացքում, անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների /հողային ռեսուրսների, կենսաբազմազանություն և այլն/ մոնիթորինգ, կազմել հետնախազծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, հրդեհանվտանգության և սանիտարական նորմերի պահպանմանը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված «Արզական-Երևան ջրատարի» նշակետ 165+50 «Նոր Հաճըն» փիէկի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Արմինե Վարդանյան